**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ կառավարության աշխատակազմի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու հեռախոսներ՝ ըստ կից ներկայացված գնման առարկայի բնութագրի (հավելված 1):

Սույն հրավերի ծածկագիրն է «ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-11/12-14/26»

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետև՝ Կայք) միջոցով՝ մինչև հայտերի ներկայացման համար կայքում նշված վերջնաժամկետը:

Հայտերը կբացվեն Կայքի միջոցով՝ հայտերի բացման համար կայքում նշված օրվա նշված ժամին:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է ՀՀ կառավարության աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալին փոխարինող Աշոտ Ավետիսյանը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով:

Հայտը ներառում է.

1. Մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը (հավելված 2),
2. Մասնակցի գնային առաջարկը (հավելված 3):
   *Գնային առաջարկը ներկայացվում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով և կայքում պարտադիր լրացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:*
   *Գնային առաջարկին կցվում է (Կայք է ներբեռնվում) մասնակցի կողմից հաստատված բնօրինակ փաստաթղթի արտապատված (սկանավորված) տարբերակը (ֆայլը), որում ներկայացվում է գնի առաջարկի հաշվարկ՝ բաղկացած ինքնարժեք և ավելացված արժեք ընդհանրական բաղադրիչներից:*

Գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Հայտերը պետք է պատրաստել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կից՝ գնման առարկայի բնութագիրը, դիմումի և գնի առաջարկի օրինակելի ձևերը (հավելված 2, 3) և կնքվելիք պայմանագրի նախագիծը (հավելված 4):

**ՀՀ կառավարության աշխատակազմ**

---

հեռ. 51-59-19
էլ. հասցեն՝ gnumner@gov.am